

այսինքն Պուտատրոնին հիւանդութեանը ինչը ըլլալուն վրայ որոշ կարծիք մը չունի . բայց միանգամայն իւրեն տագնասլը կը յայտնէ՝ թէ ինչպէս վճռաբար մահտարաժամի անուն տրուեր է ան հիւանդութեանը : Իւր ժըշկին տարակուսիլը հոս խիստ շատ կը զօրէ , որովհետեւ բժշկութեան արուեստէն հասկրցողը միայն ինքն էր , ու սկիզբէն հիւանդութեն ընթացքը դիաեր էր :

Եւ մենք աս ալ կ'իմացընենք մեր ընթերցողներուն՝ որ եթէ նոյն բժիշկը Պուտատրոնին հիւանդանալին առաջ եղած պարագաները քննէր , և յիշելու ըլլար թէ ուռեցքը անմիջապէս արեւելեան ժանտախտին նշանը չէ , բոլորովին կը փարատեին իրեն տարակոյները , և ալ չէր երկրայեր Պուտատրոնին հիւանդութել վրայ :

Պարոն Պետանը աս հմտական գըր բուտածքէն ետքը ան նամակն ալ հրատակեր է , որ մենք հարկ չհամարեցանք թարգմանել : Այս յուսանք որ աս քաղուածոյ թարգմանութենէս ալ կ'իմանան մերօնք Պարոն Պետանին քաջութիւնը , ու մերազգին նաև օտարաց առջեւ պատիւ ընելը . որովհերես իրենք ալ քաջալերուին գիտութեանց ու արհեստից մէջ օրէ օր յառաջանալու , մէկ կողմանէ ալ իրենց հանձարը չծածկելու :

Հ . Տ . Թ .

ՎԵՐՏԱՄԱՆԻԹԻՒԻՆ

Գ. Է. Ե. Կ. Հ. Ա. Հ. Հ. Հ. Հ.

ԵՌԹ անցորդ . այլընդ որ և երթիցես , Ամենայն ճանապարհ այսր ածցէ զբեզ :

ՏԱՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՄԴԱԲՈՒԹԻՒՆ

Չիլենի :

Չիթենին հին ատենի խիստ անուանի ծառերէն մէկն է . բանաստեղծները ասոր վրայ երգեր կը չենին , պատմիները շատ գովեստներ կը գրէին . շատ պատկերներու ու արձաններու վրայ ասոր տերեներէն ձեացուցած պատկներ կը գտնուին . խոկ ձիւղերը՝ որ խաղաղութեան նըշան են , շատ յիշատակարաններու վրայ փորուած կը տեսնուին : Չիթենին այսափի յարգի բան ըլլալուն պատճառը ուրիշ բան չէ ; բայց եթե իրեն անոյշ ու յատակ եղը որ իր պըտուղներէն կը հանուի :

Հին ատեն միայն ձիթենիէ եղ կը չանէին . պատուոյ համար աս եղը մեռելներու խարուկին վրայ կը սըրսկէին , ու Վատուծոյ զոհի տեղ կ'ընծայէին : Խնչպէս հիմա եկեղեցականաց՝ հին ատենն ալ իբրեւ սըրազան կնիք՝ քահանայապեաններուն Ճակատը ձէթ կը քսէին , նաև թագաւորները ձէթով կ'օծէին , ինչպէս նաև քաղաքացիներէն շատերը՝ բաղնիքէն ելլալէն ետեւ : Եւ որովհետեւ ձէթին գործածութիւնը խիստ շատ էր , ամէն ջանք կ'ընէին որ ձիթենիի մշակութիւնը շատնայ , ինչուան պարզենէր ալ կուտային՝ ձիթենին աղեկու առատ մշակողներուն . և ովոր առանց հրամանի մէկ ձիթենի մը կը բեր , կը պատժէին :

Հիմա ալ շատ երկիրներ մասնաւոր փոյթ ունին ձիթենին մեծցընելու , ու իր բերած շահը բաւական յորդորանք է որ ետեւ ըլլան մարդիկ ու շատցընեն :

Չիթենին Վահայի բոյս է . առաջ Վարիկէի տաք ու բարեբեր երկիրներուն մէջ անկուելով խիստ բազմացաւ ,

ետքն ալ յւրոպայի արեմանեան կողմը : Բառնը կարճ է , կեղեց կարծր , ձիւղերը աղուորութիւն մը չունին , տերեները միխրադոյն կանանչ , ծաղիկներն ալ ոչ հոտ ունին և ոչ գեղեցկութիւն : Պատուղը քանի որ կանանչ ու տհաս է , սաստիկ գառն կ'ըլլայ . աս պտղէն է ահա՝ որ այնպիսի ազնիւ ու մարդուս օգտակար և հարկաւոր եղը կը հանուի :

Հին ատենէ՝ 'ի վեր այլ և այլ կերպեր հնարուած են ձիթենին պտուղը ախորժահամ ընելու համար : Ոմանք երկար ժամանակ աղի ջրի մէջ կը գնեն , ոմանք ալ համեմերու և ուրիշ անուշահոտ բոյսերու հետ կը խառնեն : Հիները եռացած ջրէ կ'անցընէին , իսկ արեելցոց շատերը վրան աղ կը ձգեն ու երբեմն երբեմն կը խառնեն , ինչուան որ աղը լաւ մը պըտուղներուն մէջ թափանցէ : Առանց այսպիսի հնարքներու անկարելի է որ ձիթապտուղը ուտուի , բաց 'ի մէկ տեսակէն որ անոյշ ձիթենի կ'ըսուի , ու Կափոլիի տէրութեան մէկ գաւառին մէջ միայն կը մշակեն :

Ձիթենին խոնաւ ու ջրոտ տեղերէ զատ՝ ուրիշ ամէն հողի մէջ առաջ կուգայ . միայն թէ աս ալ գիտնալու է որ այլ և այլ կլիմաներու օգերուն փոփոխութիւնը մեծ աղդեցութիւն կ'ընէ աս բոյսին վրայ . թէ որ տաք օդին ետևէն սաստիկ պաղգայ , կամ պաղ օդին ետևէն սաստիկ տաք , ձիթենին մէկէն կը փանանայ . ուստի աս ծառը աւելի բարեխառն կլիմաներու տակ առաջ կուգայ : Ուստի տես հիւսային երկիրներու մէջ որ խիստ ցուրտ են՝ շատ ջանք ընելով քիչ մը առաջ բերին ձիթենին , բայց խիստ քիչ պտուղ կուտայ , ան ալ բոլորովին ահաս կը մնայ : Ա ասն զի՞ ձիթենին քանի որ աճելու վրայ է՝ գետնէն հիւթ ծծելու ատենը երբոր օդը ցուրտ ըլլայ , սաստիկ կը վնասուի . և թէ որ ցուրտը սաստիկ ըլլայ , մէկ գիշերուան մէջ շատ ձիթենիներ կը փանանան :

Կարնջին պէս ասիկայ ալ երկու տարին մէյմը կը պտղաբերէ , թէ որ նոյեմբեր ամսուն մէջ պտուղը չքաղուի . իսկ թէ որ քաղոցը մինչև նոյեմբեր ձգուի , եղը խիստ ազնիւ ու մաքուր կ'ըլլայ : Ին եղն որ պարզ ձրգմելով կը հանուի՝ տուանց տաք ջրի , ամենէն աղէկն է , ու իրա եղ ըսուածը ասիկայ է :

Ձիթենին մշակութեն կերպը շատ դիւրին է , ու քիւմը աշխատութեամբ կ'ըլլայ . բաւական է որ չորցած ձիւղերը կտրես , որպէս զի՞ օդը աղէկ բանի մէկալնոնց մէջ :

Ո՞եկ ծառ մը չկայ որ ձիթենին պէս դիւրաւ աճի , թէ տաշտաթաղը ընելով , թէ պատուաստելով և թէ հունտը ցանելով : Ուստի որ յանկարծ գիպուտածով մը ձիւղերն ու բունն ալ չորնայ , ծառը բոլորովին չփանանար , հապա արմաները թարմ կը մնան ու նորէն կը սկսին ձիւղ տալ : Այս յատկութիւնը ուրիշ շատ ծառեր ալ ունին . բայց ձիթենին աս սքանչելի յատկութիւնս ալ ունի որ կտոր մը իր կեղեւն աղէկ հողի մէջ տնկելու ըլլաս նէ , բառասունուերկու օրուան մէջ թէ արմատ կը ձգէ և թէ շառաւիդներ կուտայ :

Ձիթենին ձիւղ մը տասուերկու տարուան մէջ ծառ կը դառնայ , ու կը սկսի պտուղ տալ . բայց առատ պըտուղ քաղելու համար մինչև երեսներօդ տարին պէտք է սպասել : Բնապատումները կ'ըսեն թէ ձիթենին ինչուան հինգ կամ վեց հարիւր տարի կը գիմանայ , և ինչուան վաթսուն ոտնաշափ բարձրութեամբ ձիթենին տեսեր են՝ որուն տրամադիծը վեց ոտնաշափ է եղեր :

Փայտը կարծր ու խիտ է , կրնայ ողորկուիլ ու աղուոր տեսք առնել . արուեստներու մէջ շատ կը գործածուի :